

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒԹՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿՅԱՆՔԻՑ**

Վ. Գ. ՆԱԱՋԼՅԱՆ

Անդրադառնալով ամերիկահայ համայնքի անցյալ պատմությանը, հարկ է նշել, որ դեռևս XVII դ. առաջին տասնամյակներից հայերն սկսել են պանդխտել Հյուսիսային Ամերիկա:

Առաջին հայը եղել է Ջոն Մարտին Հայը, որն այդ երկիրը ոտք է դրել 1613 թ.: Հայտնի է նաև, որ Վիրջինիայի նահանգապետի հրավերով երկու շերամաբուծ հայ վարպետներ Թուրքիայից հրավիրվել են Ամերիկա՝ շերամաբուծությունը զարգացնելու:

XVIII—XVIII դդ. հայերը Ամերիկա են մուտք գործել Արևելյան Նվրդպայի երկրներից՝ հատկապես Լեհաստանից և Հունգարիայից:

XIX դ. 30-ական թթ. հայերի նոր հոսք է սկսվել, որը Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ վայրերում ամերիկյան միսիոներների քարոզչական գործունեության հետևանքն էր:

Անցյալում, սակայն, պանդխտելով Ամերիկա, հայը նպատակ է ունեցել ոչ թե հիմնական բնակություն հաստատել այնտեղ, այլ՝ աշխատել, դրամ վաստակել ու վերադառնալ իր երկիրը:

ԱՄՆ-ի հայ համայնքը ձևավորվել է 1890-ական թթ., երբ հայերը զանգվածաբար այնտեղ գաղթեցին սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած կոտորածների հետևանքով:

1898 թ., երբ Ուստրում հիմնադրվում էր էջմիածնական առաջին թեմը, ամերիկահայ ազգայիններին ուղղած իր հայրապետական կոնգալով խրիմյան Հայրիկն ավանդեց. «Սիրեցէք և հաստատուն պահեցէք ձեր մայրենի լեզուն, այն երկնապարզել լեզուն, որով խօսեցին եւ աղօթեցին, երգեցին և լացին ձեր հայրերն ու մայրեր իրենց հայրենեաց մէջ, իրենց պանդխտութեան մէջ, եւ իրենց եկեղեցւոյ մէջ. նոյնը եւ սրբութեամբ աւտնդեցեք ձեր որդւոյ եւ ժառանգաց միշտ անմոռաց պահել զայն, քանզի եթէ կորուսէք ձեր լեզուն կորսնցուցած եք եւ ձեր ամեն ինչ: Հաստատուն մնացէ՛ք ձեր հայրենի աւանդութեանց, պահեցէ՛ք ձեզ մաքուր եւ անարատ ձեր ամեն կենցաղավարութեանց մէջ, ի բաց կացէ՛ք այն ամեն մոլորութիւններէն, որ մարդուս դէպի կորուստ են առաջնորդում... Թող նոր աշխարհի կեանքը՝ իր ամեն շքեղութիւններով եւ փայլերով զձեզ չհրապուրէ. յիշեցէ՛ք, որ դուք պանդխտ էք այդ օտար երկրում. յիշեցէ՛ք, որ մի օր Խորայէլի նման Տէր Աստուածը զձեզ եւս պիտի հանէ այդ պանդխտութեան աշխարհէն՝ դէպի ձեր հայրենի երկիրը. յիշեցէ՛ք, որ օտարը միշտ օտար է...»²:

Մեծ եղեռնից հետո արևմտահայության հոծ զանգվածներ սկսեցին գաղթել ու բնակություն հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգներում (հիմնականում՝ Ուստր, Նյու Յորք, Բոստոն, Լորենս, Պրովիդենս, Ֆրեզնո, Չիկագո, Ֆիլադելֆիա): Պատմահասարակական այդ պայմաններում ամերիկահայերը սերտորեն կապված են եղել Հայրենիքի հետ: Ժամանակին Ամերիկայի առաջադեմ հասարակայնությունը զայրույթով է ընդունել հայերի ցեղասպանության մասին հաղորդագրությունները: Ամերիկայի պաշտոնական թերթերը գրեթե ամեն օր տպագրել են լուրեր Թուրքիայից՝ ողբերգա-

¹ Այս պատմական փաստերի վերաբերյալ տե՛ս James H. Tashjian, *The Armenians of the United States and Canada*, Boston, Massachusetts, 1947.

² Ա. Փ ո լ ա տ ե ա ն, *Խրիմեան Հայրիկ*, Նիւ Եորք, 1957, էջ 52—53:

կախ իրադարձությունների ականատես միսիոներների, դիվանագետների ու հրաշքով փրկված հայերի պատմածնիր, Հետևաբար, ամերիկահայերը ևս, ինչպես Առաջին աշխարհամարտի, նույնպես և նրան հաջորդող տարիներին, ռազմական ձեռք են մեկնել, որքանոցներ են հիմնել և այլ ազգագույն ծառայություններ մատուցել իրենց ժողովրդին:

Ամերիկահայ համայնքի ձևավորումից ի վեր ազգային կյանքը կազմակերպելու, հայրենակիցներին համախմբելու և օգնելու նպատակով ստեղծվել են բարեսիրական, բարեգործական, հայրենակցական միություններ (արարկիրքիներ, ախրանակերտցիներ, այնթապցիներ, մարաշցիներ, սերաստացիներ, հաճընցիներ և այլն), որոնք իրենց նախաձեռնություններով ու հրատարակություններով աշխատել են հայրենակիցների հոգիներում վառ պահել մայր երկրի հիշատակներն ու փայփայել հետդարձի հույսը:

Ամերիկահայերի սոցիալական կազմը խիստ խալտաբղետ է. ծառայողներ, մանր ու խոշոր ձեռնարկատերեր, առևտրականներ, գիտնականներ, մտավորականներ, բանվորներ, արհեստավորներ, ուսանողներ և այլն: Անվանի հայ գործիչներ կան նաև Սպիտակ տանը, Պետական դեպարտամենտում, Կոնգրեսում, առանձին նահանգների օրենսդրական, գործադիր և դատական մարմիններում:

ԱՄՆ-ի հայ համայնքն ամենախոշորն է ժամանակակից հայ սփյուռքում (ավելի քան 1 մլն) և բնութագրվում է իր եռանդուն, ազգանվեր գործունեությամբ, որի աշխուժացմանը մեծապես նպաստել է վերջին տասնամյակների ընթացքում պատմաքաղաքական իրադարձությունների հետևանքով Սիրիայից, Լիբանանից, Պարսկաստանից և Մերձավոր արևելքի այլ երկրներից ու հատկապես Հայաստանից կատարվող զանգվածային հոսքը: Այն ոչ միայն որոշ փոփոխություններ է մտցրել ամերիկահայ համայնքի (և հատկապես Կալիֆորնիայի և ուս Անջելես քաղաքի) սոցիալական կազմի մեջ, այլև՝ հաշտունչ նոր, թարմ ավիշ ներարկել նրա հոգևոր կյանքին:

Հատկանշական է, որ այժմ արդեն նկատելի են նաև մեծ խմբակցություններ (կորպորացիաներ)՝ պոլսահայերի, պարսկահայերի, լիբանանահայերի, հայաստանցիների և այլն, որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է իրեն հատուկ պատմական ճակատագրով՝ ազգակցական ու խնամիական կապերով, հետաքրքրությունների ու մտածելակերպի, լեզվի, նիստուկացի ու սովորույթների ընդհանրություններով, թեպետ հաճախ նաև՝ գաղափարական հակասություններով:

Նոր երկրի՝ Ամերիկայի խալտաբղետ ազգաբնակչության կազմն ու հասարակական բարդ հարաբերություններն ստիպում են այդ խմբակցություններին հարմարվել ու ընտելանալ տեղի սլավաբաններին: Այդ նպատակին է ծառայում «էմիգրեյշն» էնդ նատուրալիզեյշն» (գաղթեցում և բնականացում) կազմակերպությունը, որն օգնելով գաղթականներին, նրանց ոչ միայն նոր երկրում բնակեցնում, այլև՝ բնականշանում է, այսինքն՝ սոցիալական ադապտացիայի, հարմարվելու հնարավոր պայմաններ է ստեղծում, այն հաշվով, որ 10—15 տարի հետո, երբ ամառ սկսվում են այլևս չի լինի, միջին սերունդը կհսով չափ հարմարված կլինի, իսկ նոր սերունդը՝ ամբողջովին: Այդ անխնայափելի «բնականացման» եթեպես է յուրաքանչյուր անհատ՝ անկախ աղբյուրներից ու սոցիալական վիճակից: Այդ իսկ նպատակով ստեղծված են հատուկ դպրոցներ, որտեղ գաղթականներին թոշակավորելով ուսուցանում են անգլերեն, Սակայն լեզուն, և հատկապես մայրենի լեզուն, պատմականորեն ամեն մի ժողովրդի գոյատևման հիմնական պայմանն է: Ահա

* Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած անձնական ուղևորության ընթացքում մեր հիմնական նպատակն է եղել, ըստ հնարավորին, բանահյուսական ու ազգագրական բնույթի նյութեր հավաքել հայ համայնքի բազմաշերտ ու բազմադան ժողովրդական զանգվածների ամենատարբեր ներկայացուցիչներից:

թե ինչու ԱՄՆ-ում, հատկապես Կալիֆորնիայում հայապահպանման գործն իրենց վրա են վերցրել ոչ միայն Բարեգործական Ընդհանուր Միությունը, Հայ Օգնության Միությունն ու հայկական եկեղեցիները, այլև հայկական բազմաթիվ նորաստեղծ դպրոցներն ու կոլեջները, տպարաններն ու խմբագրությունները, որոնք լույս են ընծայում բազմաթիվ գրքեր, տարբեր կուսակցությունների պաշտոնաթերթեր ու ամսագրեր, որոնք ոչ միայն նպաստում են ամենօրյա լրատվությանը, այլև մեծապես սատարում են հայ գրականության ժողովրդականացմանը և հայ մշակույթի տարածմանը։ Միաժամանակ, կանոնավորապես կազմակերպվում են նաև հայկական ձայնասփռման ու հեռուստատեսային հաղորդումներ՝ շաբաթվա հատուկ օրերին ու ժամերին։ այս բոլոր միջոցներով ձգտում են ըստ հնարավորին խուսափել վերահաս ուժացումից։ Վերջին երկու-երեք տարիների ընթացքում, երբ հայ ժողովուրդն ապրում էր ազգային ինքնագիտակցության բուռն վերելք և աշխարհացունց երկրաշարժը, որը ցնցեց ու ավերեց Հայաստանի զգալի հատվածը, ամերիկահայությունը մեկ աչք, մեկ ականջ, մեկ սեռոուն նպատակ դարձած հետևում էր զանգվածային տեղեկատվության միջոցներին և իր մտահոգությունն ու սրտակցությունն արտահայտում գործնականապես։

Տարբեր երկրներից գաղթած մեծահասակներից գրի առնված բանահյուսական սուղ նմուշները մեզ որոշ պատկերացում են տալիս աստանդակա՛հայի անհայրենիք կյանքի պայմանների, շարաշար աշխատանքով ձեռք բերած նյութական որոշ բարեկեցության մասին, որը թեպետ արտաքուստ նրանց տալիս է ամերիկյան կերպարանք, սակայն հոգու խորքում նրանք մնացել են հայ, իրենց պատմական, լուռ-մխացող վերքերով, և նրանց երեւակայությունը մշտապես թափառում է իրենց ավերված հայրենի օջախի, նահատակված հարազատների, անցյալի տխուր հուշերի աշխարհում։

Մեծահասակներից գրի ենք առել մի շարք հուշապատումներ։ Հուշապատումը ժողովրդական բանահյուսության թերևս ամենահավաստի ու փաստացի ժանրն է, որը ց'արդ պատշաճ ուշադրության չի արժանացել մեր բանագիտության կողմից։ Հուշապատումն իր պարզ, ժողովրդական պատմելաձևով վերարտադրում է հասարակ մարդու գիտակցական կյանքի կարևոր դրվագները՝ հուշերի, հույզերի ու վերապրումների միջոցով։ Հուշապատումի մեջ անձնական կյանքի համայնապատկերի վրա ուրվագծվում են ոչ միայն պատմական-հասարակական դեպքերն ու դեմքերը, այլև անմիջականորեն արտացոլվում են ժողովրդական բանավոր խոսքի առանձնահատկությունները. անհատի օգտագործած օտարամույժ ու փոխառյալ բառերն ու տեղանուններն ուղենշում են այն երկրները, որտեղ ճակատագրի բերումով անցկացրել է այդ անհատն իր կյանքը և կամ տպավորիչ շփումներ է ունեցել տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների հետ։ Բացի այդ, հուշապատումն իր մեջ ներառում է բանահյուսական զանազան տարատեսակներ, այնտեղ կարելի է գտնել և՛ երգի պատառիկ, և՛ առած-ասացվածք, և՛ օրհնանք-անեծք՝ ըստ պատմողի կարողության, հուղաշխարհի և գեղարվեստական մտածողության։

Մեր գրառած մի շարք հուշապատումներն իրենց հույժ տպավորիչ դրվագներով հաճախ նույնիսկ անհնարին ու անիրական են թվում, սակայն ստույգ ու հավաստի ներկայացնում են արևմտահայության անցյալը, որը հայ ժողովրդի անցյալն է, նրա պատմությունը։

Ահա շատերից մեկն այն ողբերգական կյանքերից, որոնք այժմ սփռված են աշխարհի տարբեր երկրներում։ Արմատներով սերաստացի Արաքսի Փնթաշյանը պատմում է, որ Մեծ եղեռնի օրերին, 1915 թ., ինքը վեղ տարեկան էր, երբ դեպի Ստուրիչ անապատ աքսորի ճանապարհին կորել է։ Արաքսի բեղվիները նրան գտել ու տարել են իրենց վրանը, սկզբում՝ ծառաչիհլու, իսկ հետո, քանի որ գեղեցիկ էր ու սպիտակամորթ, Վերջինս նաև իրենց սերունդը ճերմակցնել...»։ Այդ օրերին Կ. Պոլսում մի հույն բժիշկ ևս իր աղջկան կորցրած է լինում և խնդրում է անգլիացի մի սպայի, որն իրավունք

ունենր ձիով շրջել գավառները, փնտրել, գտնել իր 5—6 տարեկան աղջկան՝ նրան պարգև խոստանալով: Այդ թոհ ու բոհի մեջ սպան չի կարողանում գտնել հույն բժշկի աղջկան, բայց ջրհորի մոտ տեսնելով դժվարությամբ ջրով լի դուլը վեր քաշող ոտաբորիկ, կիսամերկ մի այլ աղջնակի, մտածում է. «Կոնն այս աղջիկը տանիմ հույն դոկտորին, որպես մխիթարություն».

«Ու գոտին հանեց, դարկավ մեջքիս, իր ձիուն վրա քաշելով ինձ տարավ Պալիս»,—պատմում է Արաքսի Օնթաշյանը և արցունքները սրբելով շարունակում, թե ինչպես արաբները հետապնդում են նրանց: Մի բարի քրդուհի երկու շաբաթ պահում է նրանց, կարծելով, որ հոգատար անգլիացի սպան այդ աղջնակի հայրն է կամ մեծ եղբայրը: Ապա գիշերով զգուշորեն դուրս է հանում նրանց, բայց ամառի անապատում այս անգամ գայլերն են շրջապատում: Սպան կրակ է վառում, մի կերպ ազատվում են ու հասնում Կ. Պոլիս, գնում հույն բժշկի տուն: Բժշկի կինը հեռվից տեսնելով սպային աղջնակի հետ, կարծում է, թե իր հարազատ դուստրն է գտնվել, հուզմունքից հանկարծամահ է լինում: Բժիշկը Արաքսիին ներս է առնում, և «քանի որ արաբների մոտ լվացվել չկար, կարագ լողը կքսվեին, արևին կնստեին, մաշկը կծծեր, հետո գետը կմտնային, կլողային», ուստի աղջնակին լողացնել, հագցնել է տալիս և նրա թևի վրա «Ա-Օ» հայերեն տառերի դաջվածքը տեսնելով՝ նրան տանում, հանձնում է հայկական որբանոց: Որոշ ժամանակ անց մի մարդ է գալիս որբանոց և փնտրում թևին «Ա-Օ» տառերն ունեցող աղջկան: «Որբանոցին մյուս աղջիկները կըսեն.—Ախ, ո՞վ գիտե՝ այդ որդուն բախտն է էկած, որդուն բախտն է բացված»: Այդ մարդը Արաքսի Օնթաշյանի մորեղբայրն էր, որը նրան վերցնում, տանում է իր քրոջ՝ Փուփուլի մոտ: Վերջինս տեսնելով իր աղջկան, «Ի՞մա է,—ըսավ,—խեղճ մամայիս ագրաները ամենը մեկ բերանին մեջ թափվեցան»: Այնուհետև նրանք՝ մայր ու աղջիկ, անցնում են Ռումինիա: Մայրն ամուսնանում է մի հայի հետ, որը համաշխարհային երկրորդ պատերազմի օրերին զոհ է դառնում Ֆաշիստական զնդակոծությանը, իսկ Արաքսին ամուսնանում է մի հայ երիտասարդի հետ, որը նրան հասցնում է Ամերիկա: «Է՛՛՛՛ ձագա,—ասում է տիկին Արաքսին,—իր տունն դուրս եկողը ոտքը հազար ու մեկ փորձանքի կուգա, ի՞նչ ըսեմ անոնց, ովքեր մեր գլխուն այս զուլումը բերին»,—ու ավարտեց իր խոսքը հետևյալ թուրքերեն անեծքով. «Դուրբաթ իջատ էդն գյորմեսին չեննեթ» (Պանդխտություն հնարողը թող շտեմնի դրախտ):

Ի դեպ, մեր գրառած նյութերի մեջ կան ինչպես հայերեն, նույնպես և թուրքերեն երգեր Դեր Զորի, ջարդի ու կոտորածի վերաբերյալ, որչափով աքսորյալների մեջ եղել են նաև թրքախոս հայեր.

Սաբախդան կալբդըմ, գյունեշ փարլըյոր,
Զեթեններ օթուրմըշ սիլահ յաղլըյոր,
էրմենիյա բակդըմ, յաման աղլըյոր,
Դինը բին ուղընա էօլեն էրմենի:

Առավոտյան զարթնեցի, արևն էր փայլում,
Զեթենները նստած զենքերն էին յուղում,
Հայերին նայեցի՝ սաստիկ էին լաց լինում,
Հանուն հավատքի հայերն էին մեռնում:

Գրի առնված նյութերի մեջ կան նաև հայրենաբաղձ երգերի պատանդներ, որոնք միջին սերնդի ներկայացուցիչներն են վերհիշել, որպես իրենց ծնողներից մնացած վերջին մասունքներ: Այսպես, օրինակ, Ծգիպտոսից գաղթած 55-ամյա Հարություն Բոյաջյանը խանդավառաբար էր հիշում իր կեսաբացի մոր՝ Արշակունու կատարած սրտառուլ երգի հատվածները.

Գյուղին ծայրը, վտակին քովիկ,
Մառերուն մոտ, կանաչ զովիկ,

Խրճիթ մը կար՝ համեստ, սիրուն,
 Իմ հայրենի, անմահ տուն:
 Ուրախություն, հաճույք ու սեր,
 Հայրենի տունս եմ լեցուցեր,
 Արևի տակ չկա մեկ բան,
 Իմ հայրենի տա՛նս նման:

Հայրենակարոտ այս տողերն առանձին շնչովածուխված էին հնչում նյու Յորքում՝ խոր հակադրություն ստեղծելով երկինք խոյացող վիթխարի բարձրաբերձների և երսնելի, համեստ խրճիթի միջև, որի «նմանը չկա» նույնիսկ ամբողջ աշխարհում: Այդ պարզ ճշմարտությանն են հանդել հայրենի տնից քշված արևմտահայ հատվածի ոչ միայն ավագ սերունդը, այլև նրան հաջորդող երկրորդ և նույնիսկ երրորդ տարադիր սերունդները, որոնք, աշխարհը ոտքի տակ տալով, ի վերջո հասել են հեռավոր Ամերիկայի հանգրվանավետ ափերը, բայց նրանցից շատերը դեռևս փափայում են հայրենիքում «պզտիկ տնակ մը» ունենալու երազը: Հայրենաբաղձ այդ զգացումն է արտահայտված նաև տիգրանակերտցի Սոնյա Քյորոզյանի առածներից մեկում. «Մըկյօր խուշին օսկը խաֆասը դրին՝ ա՛խ վաթան, ըսավ» (Մի օր թռչունը ոսկե վանդակը դրելին՝ ա՛խ հայրենիք, ասաց):

Լսել ու զրի ենք առել նաև մի շարք այնպիսի առած-ասացվածքներ, որոնք զաղափար են տալիս ամերիկահայերի առօրյա կյանքի, հասարակական հարաբերությունների, հանապազօրյա ապրուստը հայթայթելու համար շարաշար աշխատանքի պայմանների մասին, որտեղ ամեն ինչի չափանիշը փողն է՝ դոլլարը: Քանի որ «ժամանակը դոլլար է», և «եթե բանկում դոլլար չունես, մարդ քսվելու արժանի չես»:

Ահա և չափածո մի պատկեր.

Բաստոն, շափա, կրավատ,
 Հագած, կապած ման կուգա,
 Սիտիզըն է՝ դերդ շունի,
 Գրպանը մեկ սենտ շունի:

Սա ոչ միայն զաղափար է տալիս ցիլինդր-գլխարկով, փողկապով ու ձեռնափայտով ման եկող ամերիկահայատակ «սիտիզընի» արտաքուստ շքեղ թվացող կերպարանքի մասին, այլև՝ նրա դատարկ գրպանի, որը ենթադրում է նաև ապրուստի հոգսը, վաղվա անստուգությունն ու այլասերման վախը...: Հոգսեր, որոնք ներքուստ են ճնշում մարդուն, Եվ այդ փողային հարաբերությունների բովում աստիճանաբար աղարտվում են երբեմնի նահապետական-ավանդական առաքինությունները. «Քեֆը կավրե, դոլլարը՝ չավրեր»: Դրամի ամենազոր ազդեցության ներքո խաբսվում են նաև մարդկային, բնական հարաբերությունների նախկին չափանիշները: «Դոլլար մի՛ ուղեր ինձմե, բուդի (սառույցի) պես կպաղիմ քեզմե»:

Եվ կամ՝

- Հիսուն դոլլար կրնա՞ս տալ, Կարպի՛ս:
- Ո՛չ, չեմ կրնար տալ:
- Զպիտի մոռնամ աս ըրածդ, Կարպի՛ս:
- Գիտեմ, եթե տա՛ի, անկասկած պիտի մոռնայիր:

Արտաքուստ զավեշտական այս բառախաղը, սակայն, ծանր ու ճնշող տպավորություն է թողնում լսողի վրա ու մտածել տալիս, որ փողային նման հարաբերությունների պայմաններում մարդը մարդու համար դադարում է բարեկամ լինել: Սակայն այս միտքն այնքան էլ բնութագրական չէ սփյուռքում ապրող հայությանը, որոնք նաև պատրաստ են ազգանվեր մեծ ու գեղեցիկ գործերի: Հիշենք հետևյալ դրույցը, որը կապվում է Հայաստանի երկրաշարժի օրերի իրադարձություններին: Տիկնանք հանձնախումբը շրջում է տնից տուն՝ արհեստյալների համար հանգանակություն հավաքելու: Մի հայ մե-

ծահարուստի դուան առաջ կանդ են առնում և լսում տանտիրոջ հուզված, բարձրաձայն դիտողությունն՝ ուղղված իր ծառայողին.

— Չդիտե՞ս, մեկ լուցկիի հատիկն անգամ պետք է խնայել, խնայե՛լ, խնայե՛լ...

Ինքան առաջ կանգնած տիկիները զարմանում են լսելով այդ մեծահարուստի խոսքերը:

Գուցե, մտածում են, միտք չունի նման ժլատ մարդուց դրամ խնդրել: Լայց նրանցից մեկն ասում է.

— Զանք՝ մ, փորձը փորձանք չէ, չամուռ մըն է պատին զարնենք (Ցիսը պատին խփենք, գուցս որպես շաղախ կպչի: Այսինքն՝ գուցե կհաջողվի):

Տիկիները վարանելով դռնից ներս են մտնում: Երբ մեծահարուստը լսում է նրանց այցի նպատակը, եկհանն հարյուր հազար դոլլարի չեկ մը կստորագրե, կուտա տիկիներուն:

Տիկիները զարմացած ասում են.

— Պարոն, մենք ձեր տունը մտնալն առաջ լսեցինք ձեր խոսքերը մեկ լուցկիի հատիկը խնայելու մասին, այնպես որ զարմանալի է ձեր այս առատաձեռնությունը:

— Այս, ճիշտ է, ևս խնայողասեր եմ, քանի որ այդ դրամը դժվարությամբ կշահվի, ուրեմն պետք է խնայողությամբ ալ ծախսվի, իսկ երբ հարցը կվերաբերվի մեր Հայրենիքին ու մեր ազգին՝ միայն դրսմս չէ, հոգիս ալ կուտամ:

Ահա այս է ներկայումս սփյուռքում իշխող մտայնությունը: Չնայած իրոք, որ դրամը դժվարությամբ է շահվում, աշխատանքը ժամով է գնահատվում և հայրենի խոսակցական լեզվի մեջ անընդհատ լսելի են անգլերեն դարձվածներ. Դը թայմ իզ մանի (ժամանակը դրամ է), հետևաբար և հասկանալի է ժամանակը խնայելու, ժամանակն իրացնելու նպատակով տըրված գործարար խորհուրդը՝ Թեյք յոր թայմ (խի՛ր ժամանակդ): Եվ կամ վարվողություն տարբեր ձևեր ու արտահայտություններ. Օ քեյ (շատ լավ), Գուդ լակ (հաջողություն), Թեյք իթ իդի (թեթև վերցրու կյանքի դժվարությունները), Չին ափ (դունչդ բարձր պահի՛ր), Նո պրոբլեմ (պրոբլեմ չկա), եդի՛ր լավատես՝ Հեկ ը սայս դեյ (ունեցիր լավ օր) և այլն:

Ամերիկահայերը, ապրելով աշխարհի ամենատարբեր ժողովուրդների ներկայացուցիչների հարեանությամբ, տարիների ընթացքում կամա թե՛ ակամա, որդեգրել են զանազան նոր բարքեր, որոնք ուղեկցում են մարդկային կյանքին՝ ծննդից մինչև մահ կատարվող ծիսական արարողություններով: Այսպես, օրինակ դեռ չծնված երեխայի համար կազմակերպում են բեյբի պարտի (նորածնի հավաքույթ), որի ընթացքում հրավիրված կանայք նոր աշխարհ գալիք մանկան համար բերում են ամենատարբեր բնույթի նվերներ՝ մահճակալ, անկողին, հագուստեղեն, խաղալիք, արժեթուղթ և այլն:

Գրեթե նույն իմաստն ու նպատակն ունի նաև հարսանիքի նախօրյակին կազմակերպվող շաուեր պարտի (լոգանքի հավաքույթ), որի ընթացքում հարսնացուն ստանում է բազմաթիվ նվերներ՝ իրենց նոր ստեղծվելիք օջախի համար: Ըստ այդ սովորության, հարսնացուն և փեսացուն միասին գնում են ծովափ: Երկու կողմի հրավիրյալ կանայք լոգանքից տուն վերադարձած հարսնացուին նստեցնում են հատուկ պատրաստված բազկաթոռին՝ ճերմակ ամպհովանու տակ, և սկսում են ստացված նվերների կապուղները բացել՝ մեկ առ մեկ հայտարարելով նվիրատուների անունները: Մի կողմում նստած հարսնացուի ընկերուհիները (հարսնաքույրերը) նվերների փաթեթների վրա ամրացված գույնզգույն կպչուն զարդերից հարսնացուի համար գլխազարդ են պատրաստում և հառցնում նրա գլխին, իսկ հարսնացուի մատանին նվերների փաթեթների գունավոր ժապավենների հետ, իրար կապելով, կծկում են: Ապա հարսնաքույրերը թիկունքներով պարսպի պես շրջափակում են հարսնացուին, որը «ամրոցի» ներսում սկսում է քանդել:

ալգ կծիկը և ժապավենով շրջափակել իրեն՝ ժապավենն անց կտցնել թիկունքներով շուռ եկած աղջիկների ափերի մեջ: Իմաստուն այն է, թե մասնա-նին ո՞ր աղջկա ձեռքն ընկնի՝ տարոսը նրան կլինի:

Նույնանման սովորույթ է նաև հարսի ծնկակապը քանդելը: Պսակադրության արարողությունից հետո, նախքան մեղրալուսնի մեկնելը, փեսան հարսի փեշը բարձրացնում, ծնկակապը քանդում, հանում և դրում է ամուս-րի տղաներին (ազարներին), ո՞ր աղան կարողացավ բռնել հարսի ծնկակա-պը՝ տարոսը նրան կլինի:

Ժողովրդական այս սովորույթները թեպետ արտաքուստ դրսևորվում են իսպանական, ֆիլիպինյան, մեքսիկական և այլազգի սովորույթների այլա-զան ձևերի մեջ, սակայն իրենց խորքում պահպանում և հեռավոր կերպով անդադարձնում են նաև մեր հին հայկական, ավանդական ծեսերի վեր-հուշները, ինչպիսիք են օրինակ՝ ծննդկանի բարձին տես դնալը, հարսնա-ցուփն բաղնիք տանելը, հարսի քողը բարձրացնելը, հարսի դուխլվան, բոխ-չա բացելը, օժիտտեսը, նվերներով հարսի արնագինը հատուցելը և այլն: Իրանք հայկական ժողովրդական հնագույն սովորույթներ են, որոնք իր ժա-մանակին մանրամասն նկարագրել է անվանի ազգագրագետ Խ. Սամվել-յանն իր «Մայրական իրավունք» աշխատության մեջ:

Հյուրընկալության ձևակերպությունները կատարվում են հավուր պատ-շաճի՝ զուսպ ելակետ ունենալով նախ՝ ժամանակի սղությունը, քանի որ «ժամանակը դուլար է» պետք է խնայել և իզուր չվատնել. օրինակ՝ առանց հեռախոսազանգի այցելությունը համարվում է անպատշաճ: Բացի այդ, ըստ հնարավորին անհրաժեշտ է ավելորդ ծախսերը ևս խնայել: Ուստի մեծ ըն-դունելությունների ժամանակ, որոնք կատարվում են ճոխ հյուրանոցներում կամ ճաշարաններում, նախօրոք հաշվի է առնվում հրավիրյալների քանակը: Օրինակ՝ հատուկ հրավիրատուներով հարսանիքի հրավիրվածները պարտա-վոր են ներկայանալ յուրահատուկ զգեստավորությամբ՝ ամուսնացողների կողմից նախօրոք կազմված ցուցակից որևէ նվեր դնելով և կամ բանկային չեկ նվիրելով: Պսակի արարողության ավարտին շատերը կարող են հրաժեշտ տալ, իրենց հետ տանելով մի ղեղեղիկ շաքարաման՝ մեջը հարսանեկան ձերմակ շաքար, իսկ մնացածները անցնում են եկեղեցուն կից հյուրասի-րության դահլիճը, հարս ու փեսայի ձեռքով կտրված ավանդական հսկա տորթը ճաշակելու և ըմպելու մի բաժակ շամպայնը՝ միմյանց «չըրզ» (կե-նացը) ասելով: Ապա հարսնեկորները ցրվում են, իսկ նորապսակները մեկ-նում են մեղրալուսնի:

Հյուրընկալությունները (ալդ, փոխալդ, կնուճ, հոբելյան, բեյբի պար-տի, շաուեր պարտի, հարսանիք) հաճախ կատարվում են նաև ալա ֆուրշետ (հանպատրաստի) եղանակով: Մեղանի մի անկումում ըր-վում են միանգամից սպասողներն, հյուրերը մոտենում են պատրաստի սե-ղանին, իրենց ափսեների մեջ են վնդնում այն ուտելիքն ու ըմպելիքը, ինչ նախընտրում են և անցնում կամ տան մեջ, կամ տեսածներձ ալգում տե-ղադրված սեղանների շուրջ՝ ճաշակելու: Այս բոլորի հետ, արդեն շեն բա-ցառվում նաև հայրական-ավանդական աղմկոտ սեղանները՝ ջերմ, սրտա-ռուչ բաժակաճառերով:

Վերակուրները մեծ մասամբ ամերիկյան կամ այլ ժողովուրդների՝ պատրաստի, խանութից գնված կերակրատեսակներ են, սակայն արդեն նա-խապատված խորտիկներին, աղանդներին ու քաղցրավենիներին, որոնք նույնիսկ օտարների կողմից ոչ միայն բարձր են գնահատվում, այլև ընկալ-վում են հաճույքով: Այնպես որ աղանդություններն ու փոխազգեցություննե-րը համակողմանի են, և այդ մթնոլորտում են գոյատևում ժողովրդային կյանքի բոլոր ոլորտները:

Ինչ վերաբերում է թաղման արարողությանը, հնամենի ծեսերը գրեթե

խսպառ մոռացված են ու վերացված: Յ յ ու ն ե բ ա լ հ ո մ ը (հուղարկավորություն տուն), այն կազմակերպում է պաշտոնական զուսպ ձևերով: Մուծված դոմարի համեմատ ընտրվում են հասցուցյալի դագաղը, հագուստը, կոշիկը և նույնիսկ՝ դիմահարդարանքը: Հոգեհանգստին հանգուցյալի դին դրվում է դահլիճում կամ եկեղեցում: Շարքերով դրված աթոռներին նրստում են սզահանդեսի մասնակիցները՝ հոգևոր դասական երաժշտություն ունկնդրելով: Հաջորդ օրը սևազգեստ ձիերով դիակառքը կամ սև կադիլակը դագաղը տանում է գերեզմանատուն կամ հրկիզման: Ուղեկցում են ոչ շատ մարդիկ: Վերադարձին տանը սահմանափակվում են սուրճով կամ կազդուրիչ ըմպելիքով: Այսպիսով, թեպետ ծիսական բնույթի այս և այլ կարգի հին հայկական սովորությունները կորցրել են իրենց նախկին կիրառությունը, սակայն դրանց հետքերն այլաբանորեն մնացել և գոյատևում են արտաքուստ օտարոտի ձևերի մեջ:

Ամերիկահայերն իրենց ազգային ու եկեղեցական ավանդական տոներից բացի, մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ նշում են նաև տեղական մի շարք տոներ, որոնք իրենց մարդկային ու բարոյական չափանիշներով գրավիչ են և ուսանելի: Օրինակ, հուլիսի 4-ի՝ ԱՄՆ-ի Անկախության տոնից բացի, նոյեմբերի վերջին կիրակին նշում են Հնդկահավի օրը՝ որպես թե՛ նկատագրի վիճակ (Շնորհակալության օր): Այս տոնը ամենայն հավանականությամբ նախապես առնչվել է աշնան, բերքահավաքի հետ և եղել է բնությանը շնորհակալություն հայտնելու ծիսական տոն, որն իր մեջ հետագայում ներառել է նաև «Շնորհակալություն Աստծուն ու Ամերիկային՝ իր շոյալած բարիքների համար» պաշտոնապես թելադրված գաղափարը: Ամերիկայում ընդունված է նշել և՛ մայրերի, և՛ հայրերի տոները՝ առանձին-առանձին: Թվում է, այդ կերպ ավելի կբարձրացվի ընտանիքի և՛ մոր, և՛ հոր պատասխանատվության գիտակցությունը՝ նվազագույնի հասցնելով անհիմն ամուսնալուծումները: Այդ երկրում նշվում է նաև մի գեղեցիկ տոն՝ Վալենտայնս դեյ (Միլոցյալների օր): Այդ օրը բոլորն իրար նվերներ են ընծայում: Կանայք ծաղիկներ են ստանում: Բոլորն իրար համբուրում են այնպես, ինչպես նոր տարվա խորհրդավոր գիշերը, երբ մարդիկ տոնում են իրենց լինելությունը, ուրախանում, որ կան, ապրում են ու սիրում և, առանց մաշկի գույնի ու դավանանքի խտրության, հաշտ ու խաղաղ ապրում են այն մեծ տան մեջ, որը կոչվում է Մուրրակ:

Կենցաղային ու լեզվամտածողության նման բարդ պայմաններում ինչպես այդտեղ բնակություն հաստատած մյուս էթնիկական խմբերի, նույնպես և տարբեր երկրներից գաղթած հայերի կյանքի ու կենցաղի մեջ ամերիկյան ապրելակերպն ավելի հեշտ, գրեթե առանց դիմադրության կներթափանցեր. եթե հայկական եկեղեցին իր տերությունական ու ազգային տոնակատարություններով և զանազան այլ միջոցներով մեծապես շնչաստեր հայապահպանման գործին: Մեր օրերում իրենց հասարակական ու ազգային գործունեությունը աշխուժացրել են հայ առաքելական եկեղեցին, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիները՝ առավել կապվելով Մայր Հայրենիքի հետ: Այս առումով հիշարժան են հայաշատ Լոս Անջելեսի Ավետարանական եկեղեցու բազմաշնորհ վերապատվելի Պերճ Ճամպազյանի բոլորանվեր ջանքերը՝ հայապահպանման ուղղությամբ, Մերձավոր արևելքի երկրներից և հատկապես Հայաստանից գաղթածներին, տարբեր միջոցներով համախմբելու, նրանց բնատուր շնորհները բացահայտելու, նոր կյանքի դժվարություններին հոգևոր ու բարոյական նեցուկ դառնալու գործում: Առանձնապես տպավորիչ էր անցյալ տարվա գարնանը նրա կազմակերպած ծավալուն հայտազոտված «Հայազարթնում» միջոցառումը, որն իրականացրեց դեպի հայրենիք կատարած իր այցից հետո: Հսկա դահլիճում, օրեր շարունակ, բազմահազար հայությունը ոչ միայն ստույգ ու հավաստի տեղեկատվություն էր սերվում Հայաստանի ծայրաստիճան սրված քաղաքական իրավիճակի, այլև՝

տեսածապավենների ցուցադրությամբ գաղափար էր տրվում աղետի գոտու, ոռհների ու որբերի, փախստականների և հայ ժողովրդի հազար ու մեկ այլ հորսների մասին: Իսկ դալթում կազմակերպված հայկական գրքերի, օրացույցների, ձայներիգնեղ ու տեսածապավենների, ինչպես և հեղինակային նկարների տոնավճառն ու սրտաբուխ, կամավոր նվիրատվությունները բազմապատկում էին աղետյալների օգնության հասույթը:

Ամփոփելով նշինք, որ ամերիկահայ համայնքն այս վերջին տարիներին, հայաշատ կենտրոնների զանգվածային ներհոսի և հայրենիքում կատարված իրադարձությունների անմիջական ազդեցության ներքո, ազգային նոր զարթոնք է ապրում. ձուլման և այլաոերման հակազդեցության իր ներքին կարողություններն ավելի լարելով, նա դիմագրավում է՝ օրեդոր դառնալով ավելի հայաշունչ, ավելի ամրակուռ ու միասնական՝ Մայր Հայրենիքի հետ զորակցված:

НАРОДОВЕДЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ ИЗ ЖИЗНИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В АМЕРИКЕ

В. Г. СВАЗЛЯН

Р е з ю м е

С начала XVII в. армяне эмигрировали в Северную Америку, в Устр, в дальнейшем обосновавшись в Нью-Йорке, Бостоне, Лоренсе, Провиденсе, Фрезно, Чикаго, Филадельфии, а в настоящее время— в Лос-Анджелесе. Вследствие известных историко-политических событий за последние десятилетия массовая эмиграция из стран Ближнего Востока, и особенно Армении, внесла определенные изменения в социальный состав армянской общины.

Народоведческо-фольклорные и этнографические материалы показывают, что в условиях бытового и языково-мыслительного разнообразия американский образ жизни внедрился бы в быт армян без особого сопротивления (как в жизнь и быт других этнических групп, народов), если бы не неутомимые усилия местных армянских культурных, общественных и церковных организаций, направленные на сохранение национального духа и сотрудничества с матерью-Арменией.